

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

Մերուակարդանի Սահակյանի «Երևանի փոքր կենտրոնի վերաբերման գեղագիտական խնդիրները» թեմայով ԺՀ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հարցման համար

Առենախոնսության թեման՝ Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» ճարտարապետական միջավայրի վերաբերմումն այսօր ավելի քան հրատապ է, քանի որ նոր ճարտարապետական համալիրների ստեղծման հետ մեկտեղ առաջնահերթ խնդիրներից է նաև քաղաքային միջավայրը ձևավորող արդեն իսկ գոյություն ունեցող շենքերի և շինությունների արդի պահանջներին համապատասխանեցումը, իին պատմական կառույցների վերականգնումը՝ հաշվի առնելով գործառնական պատշաճ հազեցվածությունը և տարածքի հատակագծատարածական կառուցվածքի ամրողականության ապահովումը:

Որպես վերաբերմում դիտարկվել է քաղաքի պատմականորեն ձևավորված կենտրոնի կամ քաղաքի առանձին հատվածի վերակառուցման ծրագիրը՝ դրանց ճարտարապետական, հորինվածքային և գործառնական արժեքների վերակենդանացման լույսի ներքո: Ժառանգության օգտագործման այս մեթոդի միջոցով գործառնական արժեք է տրվում և գործնականում իրազերելի դրածնում հուշարձանների վերականգնմանը, դիտարժան վայրերի և շենքերի վերակառուցմանը և արդիականացմանը:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում քաղաքի և կենտրոնի զարգացման համար զանազան պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կողմից առաջարկվող ծրագրային, օրենսդրական, նախագծային փաստաթղթերի մշակմանը, դրանց բոլորի շրջանակում որպես գերակայություն դիտարկելով ձևավորված քաղաքային միջավայրի ամրողականության պահպանման հնարավորությունները՝ տարածքների վերաբերմում և արդի պահանջներին համարեցման միջոցով:

Առանձնակի պետք է նշել 2005 թվականին մշակված Երևան քաղաքի զիսավոր հատակագծի նախագիծը՝ մշակված որպես մայրաքաղաքի՝ մինչև 2020 թ. տարածքահատակագծային և տարածական զարգացման հիմք (հետազոտում վերջինիս հենքի վրա և մանրամասներով փաստաթղթում ներառված նախանշումները՝ 2006 թ. հաստատվել եք ք. Երևանի կենտրոնի գտնիալորման և կառուցապատման նախագիծը, այնուհետև մշակվել են կենտրոնի տարբեր հատվածների կառուցապատման նախագծեր):

Վերը նշված տեսական, նախագծային և ծրագրային աշխատություններում առաջադրվում են քաղաքային կենտրոնների զարգացման դինամիկան, միջավայրի ճարտարապետական դիզայնի և միջավայրային մոտեցման գաղափարը և ամբողջականության պահպանման կարևորությունը:

Այս տեսանկյունից Ս. Վ. Սահակյանի ատենախոսություն ունի արդիական նշանակություն: Մայրաքաղաքում ծառացած խնդիրների լուծումները տեղ են գտել Ս. Վ. Սահակյանի ատենախոսության մեջ և արտացոլված են հետևյալ կառուցվածքային բաժիններում՝ ներածության, 3 գլուխներում, եզրակացություններում և առաջարկություններում: Ատենախոսությունում, որը շարադրված է 158 էջի վրա, օգտագործվել է 102 անուն գրականություն, ներառված է 22 գրաֆիկական հավելված, այլուսակներ:

Ներածության մեջ ներկայացվում են քեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, ուսումնասիրության ենթակա խնդիրների շրջանակները, տեսական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, գիտական և գործնական նշանակությունը:

Առաջին գիսում քննարկվել են քաղաքների ճարտարապետատարածական զարգացման ուղիները և վերարժնորման փորձը: Ցույց է տրվել, որ վերարժնորումը մի միասնական գաղափարով ներառում է օբյեկտների վերականգնման և վերակառուցման աշխատանքներ՝ ուղղված ճարտարապետական, 7 հորինվածքային և գործառնական արժեքների «վերակենդանացմանը», միջավայրի ներդաշնակության ստեղծմանը և ապահովմանը: Վելուծության արդյունքում արձանագրվել է, որ վերարժնորումը քաղաքային միջավայրում պատմական կառույցների և տարածքների, ինչպես նաև խարիստ կամ ժամանակակից գործառնական պահանջներին չհամապատասխանող շենքերի պահպանման և վերաօտագրործման ամենաարդյունավետ ուղիներից մեկն է: Արտասահմանյան փորձի վերլուծությամբ առանձնացվել են միջավայրի վերարժնորման գործընթացի հիմնական սահմանումներն ու մոտեցումները՝ վերականգնման համար առաջնորդվելով «Վենետիկի կանոնադրության», «Եվրոպական կանոնադրության» դրույթներով, վերակառուցման համար դիտարկելով հարմարվողական վերաօտագրործումը, փոխակերպումը, վերահարմարվողականությունը, ռենովացիան, ռեգեներացիան, ռեվիտալիզացիան, ֆասադիզմը: Առանձնացվել են նաև յուրաքանչյուր տարածքի կամ օբյեկտի գեղագիտական որակի վերարժնորման արժեքի չորս հիմնական բաղադրիչները՝ վավերականությունը, պատմական, արտաքին և ավելացված արժեքները, որոնք դրսնորվում են օբյեկտների առանձնահատկությունների ընկալման, հասարակական կյանքում նրանց դերի կարևորության մեջ: Դրանց միջոցով տրվում են օբյեկտի արժեքի պատմական տեղեկատվական և ձևի որակական (գեղագիտական) հիմնական չափանիշները:

Քաղաքային միջավայրի վերարժնորման գործնականում իրականացված փորձի ուսումնասիրության արդյունքում հեղինակի կողմից ցույց է տրվել, որ գեղագիտական

որակի բարելավման առանձին օրինակներն իրականացվում են առանց հաշվի առնելու գործոնների ամբողջական համալիրը, այն է՝ քաղաքային լանդշաֆտի առանձնահատկությունները, գործառույթների փոփոխման ֆիզիկական և բարոյական գործոնները, միջավայրի պատմական արժեքը և տարածական զարգացման հետանկարները։ Սեմիոտիկ առանձնահատկությունները բերում են միակողմանի լուծումների, ինչը չի արտահայտում ժամանակի ընդհանուր ոգին և չի նպաստում ընդհանուր միասնական դիմագծի ձևավորմանը։ Այդ առումով գեղագիտական որակի վերաբժնորման համար առավել կարևոր է բազմակողմանի գործոնների առկայության բացահայտումը և համալիր ծրագրերի մշակումը։

Ք. Երևանի կենտրոնը, ինչպես նաև ամբողջ քաղաքի միջավայրը, վերջին մեկդարյա ժամանակահատվածում անցել է թոփքային զարգացման բարդ ուղի՝ գավառական փոքր քաղաքից մինչև անկախ հանրապետության մայրաքաղաք, որի մշտադիտարկման և զարգացման հիմնահարցերից են միջավայրի համալիր բարելավման հիմնախնդիրները։ Վերջին տարիներին ք. Երևանում, ինչպես նաև ամբողջ աշխարհում, իրականացվել են միջավայրի վերակառուցման և վերաբժնորման տարբեր փորձեր։ 1990-ականներին մեծ մասշտաբով ծավալված վերակառուցման աշխատանքների արդյունքում քանդվեցին պատմական կառույցներ, առանձին կառույցներ պահպանվեցին կամ տեղափոխվեցին, պահպանվեցին մի քանի հուշարձանների ճակատներ։ Որպես հետևանք՝ այսօր համարյա լիուլին վերափոխվել են Շահումյանի հրապարակը՝ հարակից փողոցների կառույցներով, Պուշկինի, Աբովյանի, Տերյանի փողոցների առանձին հատվածները։ Այսուեղ ամբողջությամբ կամ մասնակի վերացել են ժամանակին ք. Երևանի դիմագիծը ներկայացնող պատմական կառույցները։

Երկրորդ գլուխ վերլուծվել են Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» դիմագծի ձևավորման և գեղագիտական խնդիրների լուծման առանձնահատկությունները։ Ժամանակագրական տարբեր փուլերում ք. Երևանի կենտրոնի և պատմական միջավայրի զարգացման պայմանների ուսումնասիրության ընթացքում առանձնացվել են գեղագիտական կերպարի կերտման և խնդիրների լուծման առանձնահատկությունները։ Ցույց են տրվել են 1924 թ. Ալեքսանդր Թամանյանի կողմից նախագծված ք. Երևանի գլխավոր հատակագծով նախանշված հատակագծային կառուցվածքի կազմավորման հիմնական գործոնները և միջավայրի գեղագիտական արտահայտչականության առանձնահատկությունները, ըստ որի ձևավորվեցին «Փոքր կենտրոնի» դիմագծի հիմնական բնութագրերը։

Անդրադարձ է կատարվել հետազոտման՝ «Փոքր կենտրոնի» զարգացման ընթացքում քաղաքային լանդշաֆտի և ճարտարապետատարածական միջավայրի գեղագիտական որակի և դիմագծի արտահայտչականության վատթարացման հիմնական գործոններին՝ 1960-ականներից հետո բարձրահարկ տիպարային պանելային շենքերի կառուցմանը, 1990-ականներից հետո չիմնավորված և ապօրինի կառուցապատումնեինը,

կամայական վերակառուցման աշխատանքները և զանգվածային արդիականացման գործնքացով պայմանափորված հուշարձանների քանդմանը:

Բացահայտվել և առաջարրվել է քաղաքային լանդշաֆտին վերաբերող վերաբերման ենթակա օբյեկտների համակարգը, որտեղ օբյեկտները դասակարգվել են համաձայն բացահայտված պատկերային բոլանդակությանը վերաբերվող ֆիզիկական ձևերի՝ ուղիների, եզրագծերի, շրջանների, հանգույցների, կողմանորոշող օբյեկտների: Հետազոտության մեջ հաշվի են առնվել նաև այնպիսի գործոններ, ինչպիսին են տարածքի սոցիալական նշանակությունը, դրա գործառույթները, պատմությունը, սեմիոտիկան՝ կապված դիրքի և տեղի ավանդույթների հետ, որոնք նույնպես ազդում են շրջակա միջավայրի բնույթի վրա: Ճարտարապետական միջավայրի հիմնական բաղադրիչներն առանձնացվել են ըստ յուրաքանչյուր տարածքի կամ օբյեկտի գնահատման չորս հիմնական բաղադրիչների առկայության: Վերաբերման հիմնական օբյեկտների բազմազործոն վերլուծությունը և գեղագիտական խնդիրների լուծման առանձնահատկությունների բացահայտումը գուգորդվել են իրավիճակային պայմանների քննարկման հետ: Համալիր վերլուծության օգնությամբ տրվել են առանձնացված օբյեկտների և միջավայրի այլ բաղադրիչների ճարտարապետագեղագիտական արժեքներով և միջավայրի ներդաշնակությունը որոշող հորինվածքային օրինաշափություններով պայմանափորված գեղագիտական որակի որոշման և հնարավոր հետագա բարելավման գնահատականներն ըստ գործոնների չորս հիմնական կատեգորիաների՝ ուժեղ, թույլ կողմերի, վերաբերման հնարավորությունների և սպառնալիքների

Երրորդ գլխում նախանշվել են ճարտարապետահատակազգային միջավայրի վերաբերման ուղիները և գեղագիտական խնդիրների լուծման հիմնական սկզբունքները՝ ամփոփելով ք. Երևանի «Փոքր կենտրոնի ճարտարապետատարածական միջավայրի արդիականացման ներկայիս իրավիճակը և վերակառուցման ժամանակակից միջազգային փորձի համեմատական վերլուծության արդյունքում առանձնացնելով վերաբերման արդի փուլի հիմնական միտումները, այն է՝

բացասական ուղղվածությունը, որն անցանկայի է պատմական միջավայրի պահպանության տեսանկյունից (վերակառուցումը, վերափոխումն ու արդիականացումը՝ պատմական կառույցների ամբողջական կամ մասնակի վերացման արդյունքում, տարածքի ամբողջական վերափոխումը՝ պատմական կառույցների հիմնութիւն վերացման արդյունքում),

ընդունելի ուղղվածությունը, երբ պատմական շենքերը ավերվել են կամ պահպանվել են մասնակիորեն (հոարածքի վերաբերում՝ պահպանելով պատմական կառույցների միայն ճակատները և ավելացնելով շենքային նոր ծավալներ, պատմության և մշակույթի օբյեկտների պահպանում՝ նոր շենքային ծավալների ու կառույցների հետ գուգորդմամբ, նոր ճարտարապետական համալիրների ստեղծում, որտեղ պատմական կառույցները պահպանվում և միավորվում են նորերի հետ),

գերադասելի ուղղվածություն (պատմական ժառանգության և շրջակա միջավայրի ամրողությամբ պահպանում և ամրողականության վերականգնում, ամրակայում և ռեվիտալիզացիա):

Որպես աշխատության առավել արժեքավոր հատված հարկ է նշել, որ մշակվել և առաջադրվել է քաղաքների կամ դրանց առանձին հատվածների ճարտարապետատարածական միջավայրի գեղագիտական որակի համալիր վերարժնորման մեթոդաբանությունը, որը հնարավորություն է տալիս բացահայտել վերարժնորման հիմնական սկզբունքները, չափանիշները և ուղղությունները՝ կախված միջավայրի առանձնահատկություններից:

Վերարժնորման մեթոդաբանությունը «Փոքր կենտրոնի» օրինակով կարող է կիրառվել տարբեր քաղաքների կամ դրանց առանձին հատվածների, ինչպես նաև պատմական կառուցապատմամբ ուղղորդված շրջանների միջավայրի գեղագիտական որակի համալիր վերարժնորման գործընթացում: Այն ընդգրկում է հետևյալ հիմնական գործողությունները.

- վերարժնորման օբյեկտների բացահայտում,
- վերարժնորման օբյեկտների գնահատում և արժենորում՝ վավերականությունը, պատմական, արտաքին, ավելացված արժեքները,
- բազմազործուն գնահատում և իրավիճակային վերլուծություն՝ ըստ ուժեղ և բույլ կողմերի, հնարավորությունների, սպառնալիքների,
- վերարժնորում՝ ուժեղ օգտակար կողմերի միավորում և բույլ վնասակար կողմերի մեղմացում կամ վերացում

Ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են միջավայրի քաղաքային լանդշաֆտի պատկերային բովանդակությանը և ճարտարապետատարածական համակարգին վերաբերվող ֆիզիկական ձևերի բաղադրիչների գեղագիտական որակի վերարժնորման ենթակա հիմնական մակարդակները՝ ըստ կողմնորոշող օբյեկտների:

Առաջադրվել են ճարտարապետատարածական միջավայրի և քաղաքային լանդշաֆտի պատկերային բովանդակությանը վերաբերվող ֆիզիկական ձևերի բաղադրիչների վերարժնորման ենթակա օբյեկտների համակարգը և հիմնական մակարդակները՝ ըստ կողմնորոշող օբյեկտների, այն է՝ փոքր ճարտարապետական ձևերի վերարժնորում, շենքի առանձին բաղադրիչների վերարժնորում, առանձին շենքերի վերարժնորում, բակերի ամրողական վերարժնորում, փողոցների ամրողական վերարժնորում, բաղամասի կամ ճարտարապետական համալիրի վերարժնորում, պատմական կառուցապատումներով ուղղորդվող շրջանի վերարժնորում, վերականգնում:

Հետազոտության շրջանակում մշակվել և առաջադրվել է քաղաքների կամ դրանց առանձին հատվածների ճարտարապետատարածական միջավայրի գեղագիտական որակի համալիր վերարժնորման մեթոդաբանությունը, որը հնարավորություն է տալիս բացահայտել վերարժնորման հիմնական սկզբունքները, չափանիշները և

ուղղությունները՝ կախված միջավայրի առանձնահատկություններից: Մերողաբանությունը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից. վերարժնորման օբյեկտների բացահայտում, վերարժնորման օբյեկտների գնահատում և արժենորում, բազմազործոն գնահատում և իրավիճակային վերլուծություն, վերարժնորում:

Աշխատանքի վերաբերյալ կան հետևյալ դիտողությունները.

1. Ճիշտ կլիներ թեսայի շրջանակում դիտարկվել նաև Փոքր կենտրոնին հարող հատվածների՝ որպես անցումային գոտիների նկատմամբ տվյալ մերողաբանության հնարավոր հարմարեցումը:
2. Ցանկալի կլիներ կատարված մեծածավալ հետազոտությունների արդյունքների ամբողջացման լրացի ներքո դիտարկվեր տվյալ հատվածում արժեզրկման աստիճանը տոկոսային կամ մեկ այլ արտահայտման ձևով, պատկերացում կազմելու համար փոքր կենտրոնի ինքնության կորսափի մասշտաբները:
3. Հետազոտությունը զգալի կարժնորվեր՝ վերարաժնորման գործընթացի արդյունավետ կազմակերպման գործընթացում ներկայացնելով համալիր գործիքակազմը՝ ներառյալ իրավական դաշտը և հայեցակարգային ճանապարհային քարտեզը, տրված հանձնարարականների իրազործելիությունը գնահատելու համար:
4. Մեծապես գնահատելով գրաֆիկական նյութերով խիստ ակնհայտ պատկերավոր ներկայացումը հետազոտական աշխատանքի նյութի, ցանկալի կլիներ բազմաթիվ հանգուցների մանրակրկիտ վերլուծության և առաջարկներին գուգահեռ ունենալ նաև մեկ ամողջական միջավայրի վերարժեվորման առաջարկ:
5. Առկա են որոշ վրիպակներ և անձշտություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեսրոպ Վարդանի Սահակյանի «Երևանի փոքր կենտրոնի վերարժնորման գեղագիտական խնդիրները» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որում լուծված են տնտեսական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ, նրանում ստացված լուծումները կարող են կիրառվել երևան քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում և կանոնադրությունում կիրառվելու պրակտիկայում:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են 8 տպագիր աշխատանքներում:

Սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում եմ, որ Մեսրոպ Վարդանի Սահակյանը կայացած գիտական աշխատող է, ներկայացված «Երևանի փոքր կենտրոնի

Վերաարժնորման գեղագիտական խնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետի պահանջներին, իսկ դրա հեղինակը լիովին արժանի է ԺՀ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի
նախագահի տեղակալ,
ՃԵՆԱՀ-ի «ՃՏՊԱԺ»
ամբիոնի ղոցենտ, ճ.թ.

Ն.Գ. Պետրոսյան

ՃԵՇԱՀ-ի գիտական բարունք
տեխ. գիտ. թեկնածու, պատճեն

Լ.Հ. Լինյան

1.08.2023 p.

